

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2022 թվականի
հունիսի 30-ի N 1003 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԿՆՈՋԸ (ԱՄՈՒՄՆՈՒՆ) ԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՉԳՏՆՎՈՂ ԿՆՈՋԸ ԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԳՐԱՆՑՎԱԾ (ՎԱՎԵՐ ՃԱՆԱԶՎԱԾ) ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՉԳՏՆՎՈՂ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱՄ ԲՆԱԿՎՈՂ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ԶՈՒՅԳԻՆ ԿԱՄ ԿՆՈՋԸ ՍԱՂՄԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Սույն հավելվածով կարգավորվում են վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներով տրամադրված բուժօգնության ավարտից հետո արտամարմնային բեղմնավորման եղանակով ստացված և չօգտագործված սաղմերի անհատույց տրամադրման գործընթացի հետ կապված հարաբերությունները:
2. Արտամարմնային բեղմնավորման եղանակով ստացված և չօգտագործված սաղմերի անհատույց տրամադրումը կատարվում է՝
 - 1) կենսաբանական ծնողներ (ծնող) հանդիսացող զույգի (կինը և տղամարդը) կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող կնոջ (այսուհետ՝ սաղմի դոնոր) կողմից՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնություն և սպասարկում տրամադրող բժշկական կազմակերպությանը (այսուհետ՝ կազմակերպություն)՝ սույն որոշման N 1 հավելվածով հաստատված գրավոր համաձայնությամբ (ներառյալ համաձայնության N 1 ձևով հաստատված իրազեկման թերթիկը)՝ նոտարական վավերացմամբ, եթե դոնորի կողմից ընտրվել է գրավոր համաձայնության ձևի 1-ին կետի 1-ին ենթակետով կամ 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված տարբերակը:

3. Եթե սաղմն ստացվել է գենետիկական ծնող հանդիսացող կնոջ ձվաբջջի և դոնորական սերմնաբջջի միաձուլման արդյունքում, ապա համաձայնության կողմ և սույն որոշման իմաստով դոնոր է հանդիսանում միայն գենետիկական ծնող հանդիսացող կինը:

4. Սաղմի անհատույց տրամադրման դեպքում նոտարական ծառայության հետ կապված ծախսերի հատուցումն իրականացվում է կազմակերպության կողմից, ինչը հետագայում փոխհատուցվում է ռեցիպիենտի կողմից՝ սաղմի ներպատվաստման դեպքում:

5. Սույն կարգի 2-րդ կետով նախատեսված դեպքում սաղմի տնօրինումն ստանձնումից հետո Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի N 907-Ն որոշմամբ սահմանված կարգով ծածկագրավորված սաղմի կենսաբանական ծնողների (դոնորների), ռեցիպիենտների, սաղմերի վերաբերյալ ամբողջական տեղեկությունը ներբեռնվում է էլեկտրոնային առողջապահության համակարգ, կենտրոնացված ընթացակարգով, միասնական առողջապահական էլեկտրոնային համակարգի միջոցով:

6. Սաղմի ծածկագիրը կազմված է դոնորների ծածկագրերից՝ ծածկագրի վերջում ՍՂ տառերի ավելացմամբ, ընդ որում ծածկագրի մեջ առաջինը լրացվում է ձվաբջջի դոնորի ծածկագիրը, այնուհետև սերմնաբջջի դոնորի ծածկագիրը: Երկու նույն դոնորի սեռաբջիջներից ստացված մի քանի սաղմի դեպքում ՍՂ տառերից հետո ավելացվում է թիվ (1-10-ը)՝ ըստ սաղմերի քանակի:

7. Ռեցիպիենտի ծածկագրավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի N 907-Ն որոշմամբ դոնորի ծածկագրավորման համար նախատեսված սկզբունքով:

8. Կազմակերպության տնօրինման ներքո գտնվող սաղմերի տրամադրումն իրականացվում է ըստ կազմակերպություն դիմած ռեցիպիենտների հերթագրման: Հերթագրումն իրականացվում է այն բժշկական կազմակերպության կողմից, որին դիմել է շահառուն՝ ըստ սույն որոշման իմաստով որպես ռեցիպիենտ ճանաչվելու

ժամկետի, կենտրոնացված ընթացակարգով, միասնական առողջապահական էլեկտրոնային համակարգի միջոցով:

9. Տվյալ կազմակերպությունում դոնորական սաղմերի բացակայության դեպքում հերթագրված ռեցիպիենտը բժշկական կազմակերպությունների միջև փոխադարձ համաձայնությամբ ուղղորդվում է այն բժշկական կազմակերպություն, որտեղ առկա է սառեցված դոնորական սաղմ:

10. Դոնորական սաղմի անհատույց տրամադրման և այնուհետև ներպատվաստման առաջնահերթությունը տրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի N 568-Ն որոշմամբ սահմանված՝ պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնության և սպասարկման իրավունք ունեցող և որպես ռեցիպիենտ հերթագրված գույգերին կամ կնոջը, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ ըստ ռեցիպիենտի հերթագրման ժամկետի:

11. Ռեցիպիենտին հնարավորություն է տրվում ընտրություն կատարել կազմակերպությունում առկա դոնորական սաղմերից՝ ըստ իր նախընտրած չափանիշների (դոնորի տարիք, կրթություն, կենսաչափական տվյալներ, առողջության կարգավիճակ):

12. Ռեցիպիենտի ցանկությամբ կարող է կատարվել սաղմի գենետիկական քննություն, որի արժեքը փոխհատուցվում է ռեցիպիենտի կողմից:

13. Կազմակերպությունում առկա դոնորական սաղմերի ներպատվաստումից ռեցիպիենտի հրաժարվելու դեպքում վերջինիս հերթագրումը չեղարկվում է, սակայն իր դիմումի համաձայն կարող է կատարվել նոր հերթագրում:

14. Նույն դոնորների/դոնորի սեռաբջիջներից ստացված 2 և ավելի սաղմի պարագայում սաղմերը ներպատվաստվում են նույն ռեցիպիենտին կամ պահպանվում՝ հետագայում նույն ռեցիպիենտին ներպատվաստելու նպատակով կամ ռեցիպիենտի կողմից սաղմի հետագա օգտագործման ցանկություն չհայտնելու և պահպանման ծախսերը հոգալուց հրաժարվելու դեպքում՝ ոչնչացվում:

15. Սաղմի ներպատվաստման դեպքում կազմակերպության և ռեցիպիենտի միջև կնքվող բժշկական ծառայությունների (վճարովի կամ անվճար) մատուցման պայմանագրում նշվում են տեղադրվող սաղմերի քանակը, ծածկագիրը (ծած-

կազմերը), նոտարական ծառայության հետ կապված ծախսերի՝ նեցիպիենտի կողմից փոխհատուցման պայմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ